



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵԼԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Մարտի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտի երկրորդ փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 5-7 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 12-15-ը. Տավուշում +19...+24°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +12...+14°C, նախալեռնային շրջաններում՝ +21...+23°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +26...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +17...+20°C, Շիրակում՝ +16...+20°C, (Աշոցք՝ +13°C) Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +15...+16°C, նախալեռնային շրջաններում՝ +20...+21°C, Գեղարքունիքում՝ +11...+16°C, Լոռիում՝ +16...+19°C, Արմավիրում, Արարատում՝ +22...+24°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +14...+16°C, նախալեռներում՝ +21...+23°C:

Ամենացածր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում՝ +2...+6°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ -2...-3°C, նախալեռնային շրջաններում՝ +2...+3°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +6...+8°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+2°C, (Սիսիան՝ -4°C), Շիրակում՝ -3...+1°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -1...-2°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+2°C, Գեղարքունիքում՝ 0...-3°C, Լոռիում՝ 0...+3°C, Արմավիրում՝ 0...+4°C, Արարատում՝ +3...+6°C Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -1...+2°C, նախալեռներում՝ +2...+4°C:


Տասնօրյակային տեղումներ






Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 9-25մմ (83-215%), Լոռիում՝ 10-27մմ (83-166%), Տավուշում՝ 12-20մմ (71-118%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 17-24մմ (115-200%), նախալեռներում՝ 29մմ (277%), Գեղարքունիքում՝ 14-30մմ (92-250%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 21-24մմ (109-122%), նախալեռներում՝ 24մմ (160%), Արմավիրում՝ 22-24մմ (239-300%), Արարատում՝ 11-18մմ, (79-218%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 26մմ, նախալեռներում՝ 27մմ (248%), Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 18-37մմ (162-166%), հովտային շրջաններում՝ 20մմ (182%):

Հանրապետությունում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -3...-8°C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ -2...+3°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +4°C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները

Բնության զարթոնքին զուգահեռ այգիներում սկսվում են գյուղատնտեսական աշխատանքները, կատարվում է պողպատների բների փխրեցում, սպիրակեցում՝ պաշտպանելով վնասատուներից և հիվանդություններից, էտ՝ բարելավելով ծառի օդափոխության և լուսավորության պայմանները:

Հովտային և նախալեռնային շրջաններում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները, միայն առանձին օրեր դիտված տեղումները դժվարեցրել են այն իրականացնել:



Աշնանացան ցորեն

Առանձին լեռնային և նախալեռնային շրջաններում բազմամյա միջին ժամկետներից 12-21 օր շուր աշնանացանի վեգետացիան վերսկսվեց:

Հովտային շրջաններում աշնանացանը շարունակել է գտնվել թփակալման փուլում:

Աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 13-16սմ, տասնօրյակային աճը կազմել է 3-4սմ:

Մերձավանում աշնանացանի դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի խոնավության պաշարները 0-10սմ շերտում կազմել են 12մմ, 0-20սմ շերտում՝ 28մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ բարձրացել էր 2-4մմ-ով:

Պրդաբույսեր

Ինչպես և կանխատեսվել էր, Արարատյան դաշտում բազմամյա միջին ժամկետներից 18-20 օր շուրջ ծիրանենին ծաղկել է: Հովտային և առանձին նախալեռնային շրջաններում պրդաբույսերի բողբոջները ուռչել և բացվել են, տեղ-տեղ առաջացել են առաջին տերևները:

